

**ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՀԱԿՈՒ ԲԱԼԱՍՅԱՆԻՆ**

Դիմող
«ՍԹՈՈՒՆ ԼԵՆԴ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
պետական գրանցման համար՝ 11.110.02437
ՀՎՀՀ՝ 03530369
հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մասիսի փողոց 99
տնօրեն՝ ՍԱՄՎԵԼ ՍԱՖԱՐՅԱՆ

05 ապրիլի 2021 թվական

ԴԻՍՈՒՄ

(հողամասի նպատակային նշանակությունը փոխելու վերաբերյալ)

Հարգելի՛ պարոն Բալասանյան,

Հայտնում եմ, որ «ՍԹՈՈՒՆ ԼԵՆԴ» ՍՊ ընկերությունը դիմել էր ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Ջրաբեր բնակավայրի 07-055-0206-0006 ծածկագրով 5,5523 հա մակերեսով հողամասի (**այսուհետ՝ նաև Հողամաս**) նպատակային նշանակությունը փոխելու նպատակով, որին ի պատասխան ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարի կողմից 2021 թվականի հունվարի 18-ի թիվ 49/21 գրությամբ առաջարկել էր լրամշակել ներկայացված դիմումը՝ հաշվի առնելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ներկայացված կարծիքները:

Ներկայացված կարծիքների հիման վրա դիմումը լրամշակվել է «ՍԹՈՈՒՆ ԼԵՆԴ» ՍՊ ընկերության կողմից և այն կրկին ներկայացվում է Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով:

Դիմումի լրամշակված տարբերակը 2021 թվականի ապրիլի 5-ին ներկայացնելու պատճառը կայանում է նրանում, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից կարծիք չէր ներկայացվել, որովհետև Հողամասը ծածկված էր ձյան շերտով և անհրաժեշտ էր, որպեսզի Հողամասի ձյան շերտը բացակայի՝ այն ուսումնասիրելու և պատմամշակութային հուշարձանների ամկայության վերաբերյալ կարծիք տրամադրելու համար: Հողամասի ձյան շերտը եղանակների տաքանայու հետևանքով հալվել է մի քանի օր առաջ՝ հնարավորություն ստեղծելով ուսումնասիրել Հողամասը:

Անդրադառնալով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության կարծիքներին ցանկանում ենք նշել հետևյալը.

«ՍԹՈՈՒՆ ԼԵՆԴ» ՍՊ ընկերությանը տրամադրվել է ընդերօգտագործման իրավունքի թույլտվություն Հողամասում ընդերօգտագործման աշխատանքների իրականացման համար: Այդ ընդերօգտագործման իրավունքի տրամադրման գործընթացի շրջանակներում իրականացվել են մի շարք փորձաքննություններ:

Փորձաքննությունների շրջանակներում համապատասխան գերատեսչությունների կողմից տրամադրված կարծիքների հիման վրա մեր «ՍԹՈՈՒՆ ԼԵՆԴ» ՍՊ ընկերությանը տրվել է տեխնիկական առաջադրանք, որից հետո տրամադրվել են «Արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության»



ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԳԵՏԱՐԱՆ
ՄՏԻՑ N _____
Պ = 637/21
« 05 » 04 2021 թ.

փորձաքննության և «Արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության» փորձաքննության եզրակացությունները:

Վերը նշված փորձաքննությունների արդյունքում տրամադրված եզրակացությունների մեջ ներառված են նաև ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության կողմից պահանջված տեղեկությունները:

Հաշվի առնելով վերոգրյալը, ներկայացնում ենք «ՍԹՈՈՒՆ ԼԵՆԴ» ՍՊ ընկերությանը պատկանող ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Ջրաբեր բնակավայրի թիվ 07-055-0206-0006 ծածկագրով 5,5523 հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոխելու վերաբերյալ լրամշակված դիմումը՝ հետագա ընթացք տալու նպատակով:

Կից ներկայացվում են ՀՀ Կոտայքի մարզի Ֆանտան–Ջրաբերի պեռլիտային հանքավայրի ընդերքօգտարժման իրավունքի փաթեթը, տրամադրված փորձագիտական եզրակացությունները, (որում նշված են բնապահպանական միջոցառումների ցանկը, ճանապարհների տեղադիրքը, բնակավայրերից ամենամոտ հեռավորությունները և այլն) փաթեթում առկա քարտեզը թիվ 07-055-0206-0006 ծածկագրով 5,5523 հա մակերեսով հողամասի համադրմամբ (սխեմա):

«ՍԹՈՈՒՆ ԼԵՆԴ» ՍՊԸ

տնօրեն



ՍԱՄԿԵԼ ՍԱՖԱՐՅԱԼ



Handwritten signatures and initials in blue ink.



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԲՆԱԴԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«18» 06 2018թ



ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 56

Ձեռնարկողը՝

<<ՍԹՈՈՒՆ ԼԵՆԴ>> ՍՊԸ
Ք. Երևան, Մասիսի 99

Գործունեությունը՝

Ֆանտան-Ջրաբերի պեղիպների հանքավայրի 2-րդ
տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա
միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Կոպայք մարզ

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿի
տնօրեն՝



Handwritten signature and text: Վ. Սահակյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 56

<18> 06 2018թ.

« Կոտայքի մարզի Ֆանտան-Ջրաբերի պեռլիտների հանքավայրի 2-րդ տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝
Փաստաթղթի տեսակը՝

«ՍԹՈՈՒՆ ԼԵՆԴ» ՍՊԸ
Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն
/Ա կատեգորիա/

Տեղադրման վայրը՝

« Կոտայքի մարզ, Բյուրեղաձև հանքավայրի
Ջրաբեր գյուղ



Ֆանտան-Ջրաբերի պեռլիտների հանքավայրի 2-րդ տեղամասը գտնվում է « Կոտայքի մարզում, Ջրաբեր գյուղից 1 կմ հյուսիս-արևմուտք, զբաղեցնում է 3.3հա տարածք: Հանքավայրից մոտ 1 կմ արևելք անցնում է Երևան-Սևան երկաթգիծը: Հանքավայրը Երևան քաղաքի հետ կապված է 28 կմ երկարությամբ երկաթգծով և ասֆալտապատ ճանապարհով: Հանքավայրի պեռլիտները արդյունք են Գուբանասար լեռան հրաբխային ժայթքումների: Շրջանը բնութագրվում է կտրուկ հատումներ ունեցող ռելիեֆով՝ բարձր լեռներով ու խորը կիրճերով: Տարածքում գրունտային ջրերի մակարդակը գտնվում է ռելիեֆից միջինը 108մ խորության վրա:

Հանքավայրի բացարձակ բարձրությունները տատանվում են 1695-1735 մբարձրությունների միջև: Ֆանտան-Ջրաբերի պեռլիտների հանքավայրի երկրորդ տեղամասը սահմանափակվում է հետևյալ կողողինատներով՝ 40021'15" հյուսիսային լայնության և 4038'35" արևելյան երկարության:

Հանքավայրի պաշարները՝ 25.11.1960թ. թիվ 95 արձանագրությամբ հաստատվել են Նախկին ՀԽՍՀ երկրաբանական վարչության ՊՏՀ-ի կողմից՝ A+B+C₁ կարգերով 26350.39հազ.մ³ քանակով, այդ թվում՝ առաջին տեղամաս - 6011.66հազ.մ³, երկրորդ տեղամաս - 20333.73հազ.մ³ /որից՝ B - 12344.22 մ³, C₁ - 7994.51 մ³/: Հաստատված են նաև 5175.14հազ.մ³ քանակով արտահաշվեկշռային պաշարներ, այդ թվում երկրորդ տեղամասում, ըստ C₁ կարգի՝ 1207.14հազ.մ³ քանակով: Նախագծված բացահանքի՝ 3.3հա սահմաններում պեռլիտների հաշվեկշռային պաշարների քանակը կազմում է 540հազ.մ³, իսկ արդյունաբերական պաշարների քանակը՝ 489.848հազ.մ³: Բացահանքի տարեկան արտադրողականությունը ըստ պեռլիտների զանգվածի հաշվարկվել է 20000մ³, ըստ մակաբացման ապարների՝ 400մ³/տարի: Ծառայման ժամկետն ընդունված է 25 տարի:

Հետախուզված պաշարները նախատեսված է օգտագործել, ինչպես բնական, այնպես էլ վերամշակված (փքված) վիճակում՝ շինարարության բնագավառում՝ որպես լցանյութ և ջերմաձայնամեկուսիչ նյութ, իսկ տեխնիկայում՝ որպես տարբեր կարիքների ֆիլտրեր:

Օգտակար հանածոն ներկայացվում է շերտաձև, գրեթե հորիզոնական անցումով մարմնի տեսքով: Այն որպես երրորդական հասակի հանքանյութ հանդես է գալիս թույլ մոխրագույն, գորշամոխրագույն, մոխրագույն տարատեսակներով, որոնք հիմնականում անթափանց են: Պեռլիտի շերտի միջին հզորությունը հանքավայրում կազմում է 8.94մ, ծածկող շերտը նարկայացված է ժամանակակից հողաշերտով պեռլիտի կտորների խառնուրդով, որի հզորությունը հանքավայրի տարածքում կազմում է միջինը 2,23մ:

Ֆանտա-Ջրաբերի պեռլիտների հնքավայրի օգտակար հանածոյի հաստաշերտի ձևը և տեղադրման դիրքը և մակաբացման ապարների ոչ մեծ ծավալները հնարավորություն են տալիս 2-րդ տեղամասը մշակել բաց լեռնային աշխատանքներով, առանց հորատապայթեցման աշխատանքների՝ էքսկավատոր-ավտոինքնաթափ-բուլդոզեր լեռնային համալիրի միջոցով: Բացահանքի աշխատանքային ռեժիմն ընդունվում է 260 օր/տարի, օրվա մեջ մեկ անգամ՝ 8 ժամ տևողությամբ հերթափոխով:

Նախագծված բացահանքը վերջնական դիրքում բնութագրվում է հետևյալ պարամետրերով՝

- Առավելագույն երկարություն՝ 230մ,
- Առավելագույն լայնություն՝ 210մ,
- Ամենավերին և ամենաստորին նիշերի միջև տարբերություն՝ 45մ,
- Մակաբացման ապարների միջին հզորություն՝ 0.3մ,
- Օգտակար հանածոյի միջին հզորություն՝ 14մ,
- Մակաբացման ապարների քանակ՝ 9872մ³,
- Օտարման մակերես՝ 3.3հա,
- Կողի թեքման առավելագույն անկյուն՝ 38⁰,
- Անվտանգության բերմայի լայնություն՝ 2մ:

Բացահանքում լեռնային աշխատանքներն ապահովելու նպատակով անհրաժեշտ է կատարել հետևյալ լեռնակապիտալ աշխատանքները.

- 1680մ նիշ ունեցող հորիզոնից /Երևան-Սևան մայրուղի/ դեպի 1735մ նիշ ունեցող հորիզոն մոտեցող գրունտային ճանապարհի կառուցում, L=620մ, b=6մ, V = 1800մ³

- 1735մ նիշ ունեցող հանքաստիճանից ապարների հեռացում 4120մ³ ծավալով, այդ թվում՝ մակաբացման ապարներ – 560 մ³ պեռլիտ – 3560մ³ (ուղեկցող հանույթ)

- Արտադրական հրապարակի կառուցում - 550 մ³:

Մնացած բոլոր հորիզոնների բացումն իրականացվում է նշված գրունտային ճանապարհից կտրող հորիզոնական կիսախրամների անցկացմամբ: Ավտոճանապարհի առավելագույն թեքությունը ընդունված է 100օ/օօ: Հորիզոնական բացող կիսախրամների լայնությունը հիմքի մասում ընդունված է 12մ:

Բացահանքի աշխատանքային հանքաստիճանների մշակման համար ընդունված է ընդլայնական ընթացքաշերտերով միակողանի մշակման համակարգ՝ մակաբացման ապարներն արտաքին, իսկ հետագայում ներքին լցակույտ տեղափոխելով:

Ընդունված մշակման համակարգի տարրերն են.

- Աստիճանի բարձրություն՝ 5մ,



- Աստիճանի թեքման անկյուն՝ աշխատանքային՝ 55°, աստիճանը մարելուց հետո 45°,

- Ընթացքաշերտի լայնություն՝ մինչև 10մ,

- Աշխատանքային հրապարակի նվազագույն լայնություն՝ 20մ:

Հանույթային և բարձրման աշխատանքները կատարվելու են հանքաստիճանի հատակից: Այդ աշխատանքների իրականացման համար նախատեսված է 1.6մ³ շերտի տարողությամբ ՅՕ-5122 մակնիշի էքսկավատորը, որի արտադրողականությունն է 350մ³/հերթ: Բացահանքից պեղիտի տեղափոխումը մինչև 0.5կմ հեռավորության վրա գոյություն ունեցող ջարդող տեսակավորող կայանք, նախատեսվում է իրականացնել ավտոինքնաթափերով:

Բացահանքի լցակույտ առաջացնող մակաբացման ապարները՝ 0,3մ միջին հզորությամբ, 9872մ³ ծավալով բացահանքային դաշտի սահմաններում ներկայացված են ժամանակակից բերվածքային, այլովիալ-դեյուվիալ ապարներով: 1735-1720մ նիշ ունեցող հորիզոններից հեռացվող լցակույտային ապարները /4310մ³ ծավալով/ T-130 մակնիշի բուլդոզերով կուտակվում են 10-15մ հեռավորության վրա՝ հանքաստիճանի հատակում, այնուհետև ավտոինքնաթափի միջոցով տեղափոխվում են բացահանքի հարավ արևմտյան մասում ձևավորվող արտաքին լցակույտ: 1715-1695մ նիշ ունեցող հորիզոններից հեռացվող լցակույտային ապարները /5562մ³ ծավալով/ բուլդոզերով փովում են հանքաստիճանների վրա, հարթեցվում՝ ձևավորելով ներքին լցակույտ: Արտաքին լցակույտի գաղտեցրած մակերեսը կկազմի 0.23հա, վերևի հարթակի նիշը 1705մ, մակերեսը՝ 0.8հա, շեփ թեքությունը՝ 33-35°, իսկ առավելագույն բարձրությունը՝ 20մ:

Բացահանքի ջրամատակարարումը կատարվում է արդյունաբերական հրապարակը խմելու ջրով ապահովելու, ինչպես նաև աշխատանքային հրապարակների, լցակույտը և ավտոճանապարհները փոշենստեցման նպատակով ջրելու համար փոշենստեցման մակերեսները բացահանքում ընդհանուր կկազմեն՝ 6000մ², որի համար ջրի ծախսը կկազմի 3000լիտր: Աշխատողների խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը կկազմի՝ 40,3 մ³/տարի, կամ 0.15մ³ միջին օրեկան: Կենցաղային կեղտաջրերը՝ 0.13մ³ օրեկան ծավալով լցվում են բետոնային լցարան, որտեղից սահմանված կարգով հեռացվում են: Արդյունաբերական հրապարակ խմելու ջուրը բերվելու է կցովի ջրի ցիստեռնով, իսկ տեխնիկական ջուրը փոշենստեցման նպատակով բերվելու է KO-002 ջրցան-վլացող ավտոմեքենայով: Բացահանքում ջրահեռացման միջոցառումներ չեն նախատեսվում, քանի որ տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ ապարներն ունեն բարձր ջրաթափանցելիություն:

Հանքավայրի շահագործման ընթացքում և շահագործողական աշխատանքների ավարտից հետո շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունները կանխելու, կամ նվազեցնելու նպատակով նախագծում նախատեսվել են բնապահպանական միջոցառումներ, այդ թվում՝

- սարքավորումները թույլատրել աշխատանքի միայն դրանց արտանետման գազերում վնասակար նյութերի թույլատրելի պարունակություն ապահովելու դեպքում, որի համար որոշ մեքենաների վրա դրվում են զտիչ սարքեր,

- փոշեառաջացման կանխման նպատակով՝ աշխատանքային հրապարակների, հանքախորշերի, լցակույտերի, ավտոճանապարհների պարբերաբար ջրում՝ տարվա չոր և շոգ եղանակներին,

- նավթամթերքների պահեստավորում բացահանքի արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ), ապահովելով թափված նավթամթերքների հոսքը դեպի հավաքող բետոնապատված փոսը:

Մեքենաներում օգտագործված, փոփոխված յուղերը և քսայուղերը հավաքվելու են առանձին տարաների մեջ և ուղարկվում վերամշակման: Կենցաղային աղբը և

շահագործման ընթացքում առաջացող թափոնները պետք է սահմանված կարգով հեռացվեն՝ համապատասխան մարմինների հետ համաձայնեցված:

Հաշվետվությունում ներկայացվել են միջոցառումներ, որոնք ուղղված են անբարենպաստ օդերևութաբանական պայմանների և հնարավոր վթարային իրավիճակների դեպքում ազդեցությունների կանխարգելմանը, կամ նվազեցմանը:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում ընկերությունը շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության կանխարգելման և շրջակա միջավայրի բաղադրիչների /օդ, ջուր, հող/ որակի վերահսկողության համար նախատեսում է մշտադիտարկումներ, որոնց գործողությունների ծախսերը նախնական գնահատվել են 450 հազար դրամ: Շահագործման ընթացքում առաջացող ընդերքօգտագործման թափոնների ճիշտ կառավարման համար ևս նախատեսվել են ծախսեր:

Նախնական գնահատման հայտի և հաշվետվության փորձաքննության փուլերում հանքավայրի շահագործման աշխատանքային նախագծի վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Ջրաբեր գյուղում անցկացվել են հանրային քննարկումներ: Քննարկումների ընթացքում գործունեության իրականացումը հանրության կողմից արժանացել է հավանության այն նկատառումներով, որ հետագայում հանքավայրի շահագործումը որոշակիորեն կարող է նպաստել համայնքի, կամ բնակավայրի սոցիալ-տնտեսական զարգացմանը՝ ստեղծելով լրացուցիչ աշխատանքային ռեսուրսներ:

Ամփոփելով գնահատման և փորձաքննության արդյունքները, պետք է նշել, որ հանքավայրի շահագործման ընթացքում բնապահպանական տեսանկյունից վնասակար, թույլատրելի նորմերը գերազանցող արտանետումներ և արտահոսքեր չեն առաջանա: Նախագծում նախատեսված բնապահպանական միջոցառումների իրականացումը հնարավորություն կտա նվազեցնելու, կամ մեղմելու ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, ինչպես նաև վերահսկելու նախատեսվող աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները:

Փորձաքննական պահանջներ

1. Հանքարդյունահանման աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների նկատմամբ մշտադիտարկումներ, կազմել հետնախագծային միջոցառումների իրականացման և վերլուծության հաշվետվություն, ինչը պետք է պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմիններին և հանրությանը:

2. Ջրօգտագործումը, շահագործման ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների տեղադրումը և հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

<<ՍԹՈՈՒՆ ԼԵՆԴ >> ՍՊԸ կողմից ներկայացված ՀՀ Կոտայքի մարզի Ֆանտան- Ջրաբերի պեղման հանքավայրի 2-րդ տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության տրվում է դրական գնահատական: Վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման համար:



Հ. Մկրտչյան